ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի հունիսի 18-ի

թիվ 318

քաղ. Սանկտ Պետերբուրգ

Մաքսային միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին

Մաքսային միության հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել՝

– Կարանտինային հսկողության վերցված այն արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկը, որը Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում ենթակա է կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) (այսուհետ՝ Կարանտինային հսկողության վերցված ցանկ, (Հավելված 1),

– Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին Հիմնադրույթը (Հավելված 2),

– Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին Հիմնադրույթը (Հավելված 3):

2. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարություններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից կիրառել Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկը:

3. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից իրականացնել՝

– կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) Մաքսային միության մաքսային սահմանին սույն Որոշման 2-րդ հավելվածին համապատասխան,

– կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) Մաքսային միության մաքսային տարածքում՝ սույն Որոշման 3-րդ հավելվածին համապատասխան,

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամները՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ա. Կոբյակով	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318

որոշմամբ

ՑԱՆԿ

Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների)

Անվանումը	**Ծածկագիրը** **ՄՄ ԱՏԳ ԱԱ ***
Կարանտինային հսկողության վերցված՝ բուսասանիտարական բարձր ռիսկայնությամբ արտադրանք (կարանտինային հսկողության վերցված բեռներ, կարանտինային հսկողության վերցված նյութեր, կարանտինային հսկողության վերցված ապրանքներ)	
Աքցաններ, նեմատոդներ եւ կենդանի միջատներ՝ գիտահետազոտական նպատակների համար	0106 90 001 0-ից
Կոճղեզներ, պալարներ, արմատապալարներ, պալարակոճղեզներ, հիմնարմատներ՝ ներառյալ ճյուղավորվածները, որոնք գտնվում են վեգետատիվ դադարի, վեգետացիայի (բուսաճության) կամ ծաղկման շրջանում. եղերդի բույսեր ու արմատներ՝ բացի 1212 ապրանքային դիրքում դասակարգված արմատներից՝	0601
Կենդանի այլ բույսեր (ներառյալ դրանց արմատները), տնկաշիվեր եւ ճյուղեր	**0602** **(բացի 0602 90 100 0-ից)**
Հատած ծաղիկներ եւ կոկոններ՝ պիտանի ծաղկեփնջեր կազմելու կամ դեկորատիվ նպատակների համար՝ թարմ	06 03 11 000 0 – 0603 19 800 0
Հատած ծաղիկներ եւ կոկոններ՝ պիտանի ծաղկեփնջեր կազմելու կամ	0603 90 000 0-ից

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
դեկորատիվ նպատակների համար՝ չորացրած	
Սուրբ ծննդյան ծառեր	0604 91 200 0
Փշատերեւ ծառերի ճյուղեր	0604 91 400 0
Տերեւներ, ճյուղեր եւ բույսերի այլ մասեր՝ առանց ծաղիկների կամ կոկոնների, խոտեր՝ պիտանի ծաղկեփնջեր կազմելու կամ դեկորատիվ նպատակների համար՝ թարմ, չորացրած, հետագա մշակման չենթարկած	0604 91 900 0-ից 0604 99 100 0-ից
Կարտոֆիլ՝ թարմ կամ պաղեցրած	0701
Լոլիկներ՝ թարմ կամ պաղեցրած	0702 00 000
Գլուխ սոխ, սոխ–շալոտ,սխտոր, սոխ-պրաս եւ այլ կոճղեզավոր բանջարեղեն՝ թարմ կամ պաղեցրած	0703
Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, շաղգամակաղամբ, տերեւակաղամբ եւ Brassica ցեղի այլ համանման ուտելի բանջարեղեն՝ թարմ կամ պաղեցրած	0704
Սալաթ–կաթնուկ (Lactica sativa) եւ եղերդ (Cichorium spp.)՝ թարմ կամ պաղեցրած	0705
Գազար, շաղգամ, սեղանի ճակնդեղ, քոշմորուք, արմատային նեխուր, ամսական բողկ եւ այլ համանման ուտելի արմատապտուղներ՝ թարմ կամ պաղեցրած	0706
Վարունգներ եւ մանրավարունգներ՝ թարմ կամ պաղեցրած	0707 00
Լոբազգի բանջարեղեն, կեղեւահանած կամ կեղեւով՝ թարմ կամ պաղեցրած	0708
Այլ բանջարեղեն՝ թարմ կամ պաղեցրած	0709
Շաքարային եգիպտացորեն (Zea mays var. saccharata)՝ հիբրիդային, ցանքի համար	0712 90 110 0
Լոբազգի բանջարեղեն՝ չորացրած, կեղեւահանած, սերմնակճեպը հանած կամ չհանած, կոտոր կամ ոչ կոտոր	0713
Մանիոկ, մարանտա, սալեպ, գետնատանձ կամ տոպինամբուր, քաղցր	0714-ից

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
կարտոֆիլ կամ բատատ եւ նույնանման այլ արմատապտուղներ ու պալարապտուղներ՝ օսլայի կամ ինուլինի բարձր բաղադրությամբ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած կամ չորացրած, ամբողջական կամ բլիթներով կտրատած. սագոյան արմավենու միջուկ:	
Հնդկընկույզներ, բրազիլական ընկույզներ եւ կեշյու ընկույզներ՝ թարմ կամ չորացրած, կճեպից մաքրած կամ չմաքրած, կեղեւով կամ առանց կեղեւի	0801
Այլ ընկույզներ՝ թարմ կամ չորացրած, կճեպից մաքրած կամ չմաքրած, կեղեւով կամ առանց կեղեւի	0802
Բանաններ՝ ներառյալ պլանտայինները՝ թարմ կամ չորացրած	0803 00
Արմավ, թուզ, արքայախնձոր, ավոկադո, գուայավա, մանգո եւ մանգոստան կամ գարցինիա՝ թարմ կամ չորացրած	0804
Ցիտրուսային պտուղներ՝ թարմ կամ չորացրած	0805
Խաղող՝ թարմ կամ չորացրած	0806
Սեխեր (ներառյալ ձմերուկները) եւ պապայա՝ թարմ	0807
Խնձորներ, տանձեր եւ սերկեւիլ՝ թարմ	0808
Ծիրաններ, բալ եւ կեռաս, դեղձ (ներառյալ նեկտարինները), սալոր եւ մամուխ՝ թարմ	0809
Այլ պտուղներ՝ թարմ	0810
Չորացրած պտուղներ՝ բացի 0801–0806 ապրանքային դիրքերում ընդգրկվող պտուղներից. տվյալ խմբում ընդգրկվող ընկույզների կամ չորացրած պտուղների խառնուրդներ	0813
Չբոված սուրճ՝ կոֆեինով կամ առանց կոֆեինի	0901 11 000-ից 0901 12 000-ից
Ցորեն եւ մեսլին (ցորենի եւ աշորայի խառնուրդ)	1001
Աշորա	**1002 00 000 0**
Գարի	1003 00

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
Վարսակ	1004 00 000 0
Եգիպտացորեն՝ քաղցր	1005
Բրինձ	1006
Սորգո հացահատիկային	1007 00
Հնդկացորեն, կորեկ եւ սերինոսահատիկի սերմեր. այլ հացազգիներ	1008
Ալյուր՝ ցորենի կամ ցորենա-աշորային	1101 00
Ալյուր՝ այլ հացահատիկների սերմերից՝ բացի ցորենից կամ ցորենա-աշորային ալյուրից	1102
Ձավար, խոշոր աղացվածքի ալյուր եւ հացահատիկների սերմերի գրանուլներ	1103
Հացահատիկների սերմեր՝ այլ միջոցներով մշակված (օրինակ՝ թեփահանած, տափակեցրած, վերամշակման միջոցով փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատած), բացի 1006 ապրանքային դիրքում նշված բրնձից. հացահատիկների սերմերի սաղմեր՝ ամբողջական, տափակեցրած, փաթիլների տեսքով կամ աղացած,	1104
մանր ու խոշոր աղացվածքի ալյուր եւ 0713 դիրքի լոբազգի չորացրած բանջարեղենից փոշի	1106 10 000 0
Աձիկ՝ բոված կամ չբոված	**1107**
Սոյայի հատիկներ՝ մանրատած կամ չմանրատած	**1201 00**
Գետնընկույզ՝ չբոված կամ որեւէ այլ եղանակով չպատրաստած, կեղեւահանած կամ կեղեւով, մանրատած կամ չմանրատած	**1202**
Կոպրա	**1203 00 000 0**
Վուշի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած	**1204 00**
Հլածուկի կամ կոլզայի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած	**1205**
Արեւածաղկի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած	**1206 00**
Այլ յուղատու մշակաբույսերի սերմեր ու պտուղներ՝ մանրատած կամ	**1207**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
չմանրատած	
Մանր եւ խոշոր աղացվածքի ալյուր՝ ստացված յուղատու մշակաբույսերի սերմերից կամ պտուղներից՝ բացի մանանեխի սերմերից	**1208**
Սերմեր, պտուղներ եւ սպորներ՝ ցանքի համար	**1209**
Բույսեր եւ դրանց մասերը (ներառյալ սերմերն ու պտուղները), օգտագործվում են որպես օծանելիքային, դեղագործական կամ միջատասպան, սնկասպան միջոցներ կամ նույնանման նպատակներով, թարմ կամ չորացրած, ամբողջական կամ մանրացրած, մանրատած կամ աղացած	1211 (բացի 1211 30 000 0-ից, 1211 40 000 0-ից)
Շաքարի ճակնդեղ	1212 91
Եղջերածառի պտուղներ՝ ներառյալ սերմերը	1212 99 300 0 – 1212 99 490 0
Ծիրանի, դեղձի (այդ թվում՝ նեկտարինների) կամ սալորի կորիզներ եւ դրանց միջուկները. Cichorium intybus sativum տեսակի եղերդի արմատներ	**1212 99 700 0-ից**
Հացահատիկային բույսերի ծղոտ եւ մղեղ՝ չվերամշակված, մանրացրած կամ չմանրացրած, աղացած կամ չաղացած, մամլած՝ բացի գրանուլներից	**1213 00 000 0-ից**
Շաղգամ, տերեւավոր ճակնդեղ (մանգոլդ), կերային արմատապտուղներ, խոտ, առվույտ, երեքնուկ, կորնգան, տերեւակաղամբ, լուպին, գլուլ եւ նույնանման կերամիջոցներ, չգրանուլացված	**1214-ից**
Կակաոյի ունդեր՝ ամբողջական կամ մանրատած, հում կամ բոված	**1801 00 000 0**
Կակաոյի կեղեւ, պատյան, նրբամաշկ եւ այլ մնացորդներ	**1802 00 000 0**
Հացաբույսերի կամ լոբազգիների հատիկների մաղումից, աղալուց կամ այլ կերպ վերամշակումից ստացված թեփ, մաղուցք, դարման եւ այլ մնացորդներ՝ չգրանուլացված	**2302-ից**
Կոպտոն եւ այլ կոշտ մնացորդներ, որոնք ստացվում են սոյայի յուղի զատման ընթացքում՝ չաղացած կամ աղացած, չգրանուլացված	**2304 00 000-ից**
Կոպտոն եւ այլ կոշտ մնացորդներ, որոնք ստացվում են գետնընկույզի	**2305 00 000 0-ից**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
յուղի զատման ընթացքում՝ չաղացած կամ աղացած, չգրանուլացված	
Կոպտոն եւ այլ կոշտ թափոններ, որոնք ստացվում են բուսաճարպերի եւ յուղերի զատման ընթացքում, բացի 2304 կամ 2305 ապրանքային դիրքերում ընդգրկված թափոններից՝ չաղացած կամ աղացած, չգրանուլացված	**2306-ից**
Հող եւ գրունտ	**2530 90 980 0-ից**
Տորֆ (ներառյալ տորֆային փշրանքները)՝ ալգոմերացված կամ ոչ ալգոմերացված	**2703 00 000 0**
Կենդանի ֆիտոպաթոգեն մանրէներ, վարակահարուցիչ մանրէներ՝ միայն գիտահետազոտական նպատակներով	**3002 90 500 0–ից,** **3002 90 900 0-ից**
Կենդանական կամ բուսական ծագման պարարտանյութեր՝ խառնած կամ չխառնած, քիմիական եղանակով մշակված կամ չմշակված, պարարտանյութեր՝ ստացված բուսական կամ կենդանական ծագման մթերքը խառնելու կամ քիմիական մշակման ենթարկելու միջոցով	**3101 00 000 0**
Վառելափայտ՝ գերանների, ծղանների, ճյուղերի, ցախի տրցակների տեսքով կամ այլ համանման ձեւերով **Փայտի ծեղեր կամ տաշեղ՝ փշատերեւ տեսակներից** **Փայտի ծեղեր կամ տաշեղ՝ սաղարթավոր տեսակներից** Փայտաթեփ, փայտի թափոններ եւ կտորտանք՝ չշեղջաքարացված	4401 10 000 4401 21 000 0 4401 22 000 0 **4401 30-ից**
Անտառանյութեր՝ չմշակված, կեղեւը կամ մատաղ շերտը հեռացրած կամ չհեռացրած կամ կոպիտ եզրատաշած կամ չեզրատաշած	4403 (բացի 4403 10 000–ից)
Փայտանյութ՝ տակառագործական, ճեղքած գերաններ, փայտե ցցագերաններ, ցցեր եւ սյուններ՝ սրածայր, բայց երկայնքով չսղոցած, անտառանյութեր՝ կոպիտ տաշած, բայց չշրջատաշած, չկորացրած եւ այլ եղանակով չմշակած, գործիքների եւ համանման արտադրատեսակների համար նախատեսված ձեռնափայտերի, հովանոցների, բռնակների արտադրության համար օգտագործվող. կեղեւահանված փայտանյութ եւ համանման փայտանյութ՝	**4404**
Ծառակեղեւ	1404 90 000 0-ից **4401 30 900 0-ից**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
Փայտակոճեր՝ երկաթուղային կամ տրամվայի գծերի համար	**4406 10 000 0**
Անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղեւահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ավելի հաստությամբ	**4407**
Սղոցանյութեր (ներառյալ զոլակները եւ ծոփորները՝ հատակի մանրահատակային ծածկապատման համար, չհավաքված)՝ պրոֆիլավորված չորսուի տեսքով (կատարներով, փորակներով, ագուցավոր, տաշած եզրերով, կիսակլոր մատնեքի տեսքով միացումով, ձեւավոր, կլորացված կամ համանման ձեւով) որեւէ եզրով, կողաճակատով կամ հարթությամբ, ռանդմամբ մշակված, ճակատային միացումներով՝ բացի ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով եւ այլ կոնսերվանտներով մշակած սղոցանյութից	4409-ից
Արկղեր, տուփեր, փաթեթավորման վանդակներ կամ զամբյուղներ, թմբուկներ եւ համանման տարաներ՝ փայտանյութից, փայտե մալուխային թմբուկներ, փայտե ընդկալներ, տակդիրներ եւ բեռնման այլ փայտե վահաններ, փայտե կողապատեր, որոնք ինքնուրույն բեռներ են եւ հայտարարագրվում են առանձին	**4415-ից**
Փայտակաղապար՝ բետոնելու համար, բացի ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակած փայտակաղապարից	**4418 40 000 0-ից**
Հավաքածուներ եւ հավաքածուներ կազմելու առարկաներ՝ կենդանաբանության, բուսաբանության վերաբերյալ	**9705 00 000 0-ից**
II. Ցածր բուսասանիտարական ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանք (կարանտինային հսկողության վերցված բեռներ, կարանտինային հսկողության վերցված նյութեր, կարանտինային հսկողության վերցված ապրանքներ)	
Թռչունների փետուրների կամ դրանց մասերի փոշի եւ մնացուկներ	0505 90 000 0-ից
Ոսկորների ու եղջյուրների կոթունի փոշի եւ մնացուկներ	0506 90 000 0-ից
Գլուխ սոխ՝ չորացրած, ամբողջական, կտրատած կտորներով, բլիթներով, մանրացրած կամ փոշու ձեւով, բայց հետագա մշակման չենթարկած	0712 20 000 0

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
Սնկեր՝ չորացրած, ամբողջական, կտրատած կտորներով, բլիթներով, մանրացրած կամ փոշու ձեւով, բայց հետագա մշակման չենթարկած	0712 31 000 0, 0712 32 000 0, 0712 33 000 0, 0712 39 000 0
Այլ բանջարեղեն, բանջարեղենի խառնուրդներ՝ չորացրած, ամբողջական, կտրատած կտորներով, բլիթներով, մանրացրած կամ փոշու ձեւով, բայց հետագա մշակման չենթարկած	0712 90 (բացի 0712 90 110 0-ից)
Բոված սուրճ կոֆեինով՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված սուրճից**	0901 21 000-ից
Բոված սուրճ առանց կոֆեինի՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված սուրճից**	0901 22 000–ից
Սուրճի կեղեւ եւ սուրճի հատիկների թաղանթ	0901 90 100 0
կանաչ թեյ (խմորման չենթարկված)՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված թեյից**	0902 10 000, 0902 20 000 0
Սեւ թեյ (խմորման ենթարկված) եւ մասնակիորեն խմորման ենթարկված՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված թեյից**	0902 30 000-ից, 0902 40 000 0
Մատե կամ պարագվայական թեյ՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված թեյից**	0903 00 000 0
Համեմունքներ՝ բացի սպառողական փաթեթվածքում բաժնեծրարված թեյից**	0904–ից - 0910–ից
Բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք գլխավորապես օգտագործվում են հյուսելու համար (օրինակ՝ հնդկեղեգ, եղեգնարմավենի, եղեգ, ճիլ, ուռի, ռաֆիա)՝ բացի մաքրած, սպիտակեցրած կամ ներկած նյութերից	**1401-ից**
Բամբակի ծվատուք	**1404 20 000 0**
Բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք գլխավորապես օգտագործվում են ավելների կամ խոզանակների պատրաստման մեջ (օրինակ՝ ավելի սորգո, պիասավա, մագլցող սիզախոտ եւ իստլ)՝	**1404 90 000 0-ից**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
կապուկներով, փնջերով կամ խուռնային Բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք գլխավորապես օգտագործվում են ներկելու կամ դաբաղելու համար	
Տապիոկ՝ բացի գրանուլացված տապիոկից	**1903 00 000 0-ից**
Խառը համեմունքներ	**2103 90 900 9-ից**
Կաղին եւ վայրի շագանակ	**2308 00 400 0-ից**
Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերք՝ խոլինի քլորիդ պարունակող, օրգանական հիմքով	**2309 90 950 0-ից**
Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող այլ մթերք՝ չգրանուլացված	**2309 90 990 0-ից**
Ծխախոտահումք, ծխախոտի թափոններ	**2401**
Հինա եւ բասմա (սպառողական փաթեթվածքում չբաժնեծրարված)	**3203 00-ից**
Խոշոր եղջերավոր անասունների (ներառյալ գոմեշները), ձիազգի կենդանիների, ոչխարների, գառների եւ այլ կենդանիների չմշակված մորթիներ՝ թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված)՝ մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված՝ բացառությամբ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 41–րդ խմբի 1(բ) կամ 1(գ) ծանոթագրություններով բացառվածների	**4101-ից,** **4102-ից,** **4103-ից**
Երեսապատման թերթեր (ներառյալ շերտավոր փայտանյութի մասնատումից ստացված թերթերը)՝ սոսնձած նրբատախտակի կամ համանման շերտավոր փայտանյութի համար, եւ այլ անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ, շերտերի բաժանված կամ կեղեւահանմամբ ստացված, ռանդմամբ մշակված կամ չմշակված, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ոչ ավելի հաստությամբ՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակված թերթերի	**4408-ից**
Տակառներ, տակառիկներ, գուռեր, տաքարներ եւ տակառագործական այլ արտադրատեսակներ եւ դրանց մասերը՝ փայտանյութից՝ ներառյալ տակառատախտակը՝ բացառությամբ ներկով, խածատիչներով,	**4416 00 000 0-ից**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	
Պատուհաններ, պատշգամբի դռներ եւ դրանց շրջանակները՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	4418 10-ից
Դռներ եւ դրանց շրջանակներն ու շեմերը՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	4418 20-ից
Տանիքի կավար եւ հերձան՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	**4418 50 000 0-ից**
Հյուսածո եւ հյուսքի համար նախատեսված նյութերից ստացված նույնանման արտադրատեսակներ՝ շերտերի կամ ժապավենների տեսքով իրար միացված կամ չմիացված՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների. բուսանյութերից գորգիկներ, խսիրներ եւ փեղկավարագույրներ՝ բացառությամբ ներկով, խածատիչներով,հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	**4601-ից**
Զամբյուղային, հյուսածո եւ այլ արտադրատեսակներ՝ պատրաստված անմիջականորեն հյուսքի համար նախատեսված նյութերից՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների.լուֆայից պատրաստված արտադրատեսակներ՝ բացառությամբ ներկով, խածատիչներով, հականեխիչ միջոցով կամ այլ կոնսերվանտներով մշակվածների	**4602-ից**
Թուղթ եւ ստվարաթուղթ՝ ծալքավոր, ծակոտած կամ չծակոտած	**4808 10 000 0**
Արկղեր եւ տուփեր՝ ծալքավոր թղթից կամ ստվարաթղթից	**4819 10 000 0-ից**
Շերամի բոժոժներ, որոնք պիտանի են հետ կծկելու համար	**5001 00 000 0**
Մետաքսե թափոններ (ներառյալ հետ կծկելու համար ոչ պիտանի բոժոժները, բոժոժաթելի թափոններն ու փխրունացրած հումքը)	**5003 00 000 0**
Խուզած բուրդ՝ չլվացած, այդ թվում՝ մինչեւ բրդի խուզելը կամ կաշեզերծելը, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած	**5101 11 000 0**
Կենդանիների մազ՝ բարակ կամ կոշտ, սանդերքագզման կամ	**5102**

Անվանումը	Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ *
սանրագզման չենթարկած	
Բրդի կամ կենդանիների բարակ մազի սանրագզած քոլքեր՝ չկարբոնացված	**5103 10 100 0**
Բամբակի մանրաթել՝ սանդերքագզման կամ սանրագզման չենթարկված.	**5201 00**
Բամբակյա մանրաթելի մնացուկներ (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)	**5202**
Վուշ-հումք կամ մշակած, բայց չմանած. վուշի քոլք եւ մնացուկներ (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)	**5301**
Կանեփաթել-հումք (Cannabis sativa L.) կամ մշակած, բայց չմանած. կանեփաթելի քոլք եւ մնացուկներ (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)	**5302**
Ջութե մանրաթել եւ թելատուների այլ մանածագործական մանրաթելեր (բացի վուշից, կանեփաթելից եւ ճենականեփի (չինական եղինջ) մանրաթելից), որպես հումք կամ մշակած, բայց չմանած. դրանց քոլքերը եւ մնացուկները (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)	**5303**
Հնդկընկույզի, աբակայի մանրաթելեր (մանիլյան կանեփաթել կամ Musa textilis Nee), ճենականեփի (չինական եղինջ) եւ այլ բուսական մանածագործական մանրաթելեր՝ այլ տեղում չընդգրկված կամ չներառված, որպես հումք կամ մշակած, բայց չմանած. այդ մանրաթելերի քոլքերը եւ մնացուկները (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)	**5305 00 000 0**

*) Սույն Ցանկի օգտագործման նպատակներով անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանմամբ:

**) Սպառողական փաթեթվածք ասելով հասկացվում է այն փաթեթվածքը, որն արտադրանքով անմիջապես հայտնվում է սպառողի մոտ եւ ապրանքի անբաժանելի մասն է, որը նախատեսված չէ ինքնուրույն փոխադրման համար, եւ

որն ունի սահմանափակ զանգված, տարողություն եւ չափսեր (մետաղական, ապակե եւ պոլիմերային բանկաներ, փաթեթներ մակաշերտված ջերմաեռակցվող նյութերից՝ ալյումինե նրբաթիթեղի եւ մետաղացված թաղանթի հիմքով, վակուումային փաթեթներ, հերմետիկ փաթեթներ խիտ թղթից):

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318
որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին

I. Կիրառության ոլորտը

1.1. «Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին» սույն Հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11–ի «Բույսերի կարանտինի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթներն իրականացնելու նպատակով Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) պետությունների ղեկավարների մակարդակով 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 30 որոշման հիման վրա:

1.2. Սույն Հիմնադրույթով սահմանվում է կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգը՝

1) Մաքսային միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկում ընդգրկված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծման դեպքում, որը ենթակա է Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) եւ պետք է հաստատվի Մաքսային միության Հանձնաժողովի կողմից

Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկ),

2) Մաքսային միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանման դեպքում, որի նկատմամբ Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) ստանձնել են կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) մասով միջազգային պարտավորություններ

1.3. Սույն Հիմնադրույթը Կողմերի գործադիր իշխանության մարմինների, դրանց լիազորված մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպա իրավական ձեւի իրավաբանական անձի, քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից կատարման համար պարտադիր է, որոնց գործունեությունը կապված է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտադրության, մթերման, վերամշակման, փոխադրման, պահպանման, իրացման եւ օգտագործման հետո:

Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների, այդ ներկայացուցչությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների անձնակազմի համար ներմուծվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ, ինչպես նաեւ միջազգային օրենսդրության համապատասխան առավելություններից, արտոնություններից եւ (կամ)անձեռնմխելիությունից օգտվող օտարերկրյա անձանց առանձին կատեգորիաների անձնական օգտագործման համար նախատեսված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է սույն Հիմնադրույթին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջազգային պայմանագրերով:

14. Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս Կողմերի

լիազորված մարմիններն առաջնորդվում են իրենց պետության օրենսդրությամբ այն դեպքերում, եթե՝

1) դա անմիջականորեն նախատեսված է սույն Հիմնադրույթով,

2) Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու ընթացքում առաջացած հարաբերություններն անմիջականորեն չեն կարգավորվում սույն Հիմնադրույթով:

II. Եզրույթներ եւ սահմանումներ

2.1. Սույն Հիմնադրույթում օգտագործվում են հետեւյալ եզրույթները եւ սահմանումները՝

«ներմուծում»՝ Մաքսային միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծում,

«արտահանում»՝ Մաքսային միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանում,

«վարակվածություն (ախտահարություն)»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) առկայություն,

«վերադարձ»՝ Մաքսային միության մաքսային տարածքից լիազորված մարմնի պաշտոնատար անձի հանձնարարագրով կարանտինային հսկողության վերցված՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող արտադրանքի արտահանում,

«կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) ներմուծման դեպքում»՝ լիազորված մարմինների գործունեություն, որն ուղղված է Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) հայտնաբերմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական վիճակի հաստատմանը եւ բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորվածությունների, ինչպես նաեւ իր Կողմի օրենսդրության կատարմանը,

«կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)»՝ Կողմերի տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող եւ կարանտինային օբյեկտների ազգային ցանկերում ներառված վնասակար օրգանիզմներ,

«ժամանման վայր»՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված՝ Մաքսային միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայր,

«առաքման վայր»՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված վայր, որտեղ ուղարկվում է մաքսային տարանցում մաքսային ընթացակարգով ձեւակերպված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը,

«մաքսային ձեւակերպումների ավարտման վայր»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բացթողման վայր՝ մաքսային մարմինների կողմից հայտարարված մաքսային ընթացակարգին համապատասխան՝ բացառությամբ մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի,

«մեկնման վայր»՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված՝ Մաքսային միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մեկնման վայր,

«վարակազերծում»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ համալիր գործողությունների իրականացում, որոնք ուղղված են կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների)ոչնչացմանը,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողի ուղարկելու համար:

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի փոխադրում Մաքսային միության մաքսային տարածքով»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ներմուծում Մաքսային միության մաքսային տարածք, կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանում Մաքսային միության մաքսային տարածքից,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրանք, տարա, փաթեթվածք, բեռներ, հող, օրգանիզմներ կամ նյութեր, որոնք տեղափոխվում են Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության մաքսային տարածքով, որոնք կարող են լինել կարանտինային օբյեկտներ կրողներ եւ(կամ) նպաստել դրանց տարածմանն ու որոնց նկատմամբ պետք է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ,

«կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի շարքին,

«կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական ցածր ռիսկայնության արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական ցածր ռիսկայնությամբ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին,

«արտադրանքի սեփականատեր»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատեր կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատիրոջ անունից Մաքսային միության մաքսային սահմանով արտադրանքի տեղափոխման հետ կապված գործարքների եւ (կամ) այլ գործողությունների իրականացման լիազորություններ ունեցող այլ անձ,

«տրանսպորտային միջոցներ»՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են Մաքսային միության մաքսային սահմանով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը տեղափոխելու համար,

«լիազորված մարմիններ»՝ Կողմերի ազգային մարմիններ, որոնք օժտված են կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողության) իրականացնելու լիազորություններով,

«բուսասանիտարական հսկիչ կետ»՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան կահավորված եւ զինված՝ Մաքսային միության մաքսային սահմանին բույսերի կարանտինի համար նախատեսված սահմանային կետ, որը ստեղծվում է Կողմերի պետական սահմանի անցման կետերում, կամ այլ վայրերում, որտեղ, Կողմերի օրենսդրությանը համապատասխան, կահավորվում եւ զինվում են բույսերի կարանտինի համար նախատեսված անցման կետեր,

«բուսասանիտարական պահանջներ»՝ Կողմերի միջազգային պարտավորություններին եւ դրանց օրենսդրությանը համապատասխան՝ բույսերի կարանտինային անվտանգության ապահովման նպատակով սահմանված պահանջներ, որոնք ներկայացվում են համապատասխան պետության տարածք ներմուծվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակին, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փաթեթվածքին եւ այդ փաթեթվածքի մակնշմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տեղափոխման միջոցներին, Մաքսային միության մաքսային տարածքում դրանց ժամանման հավանական վայրին եւ առաքման վայրին, ինչպես նաեւ մինչեւ ներմուծումը կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կանխարգելիչ վարակազերծման միջոցառումների իրականացմանը,

«բուսասանիտարական սերտիֆիկատ»՝ միջազգային նմուշի փաստաթուղթ, որն ուղեկցում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքը եւ տրվում է արտահանող երկրի լիազորված մարմնի կողմից՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված ձեւի համաձայն (Հռոմ, 1951 թվական, 1997 թվականի խմբագրությամբ) եւ որով հավաստվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակը: Սույն Հիմնադրույթում օգտագործվող «բուսասանիտարական սերտիֆիկատ» հասկացությունը ներառում է նաեւ վերաարտահանման բուսասանիտարական սերտիֆիկատը:

«փորձագիտական կազմակերպություն»՝ կազմակերպություն, որն ունի կարանտինային հսկողության վերցված արտադրանքից վերցրած նմուշների (փորձանմուշների) բուսասանիտարական վիճակի հետազոտման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ եւ տեխնիկական միջոցներ՝ օգտագործելով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների

(փորձանմուշների) ընտրանքի տեղանքից դուրս լաբորատոր հսկողության մեթոդներ, որոնց արդյունքները ճանաչվում են Կողմի լիազորված մարմինների կողմից՝ այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

2.2. «Մաքսային տարանցում ընթացակարգի», «առեւտրային եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր» հասկացությունները կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված նշանակությամբ:

Մյուս հասկացությունները կիրառվում են միջազգային պայմանագրերով սահմանված նշանակությամբ, որոնք կնքվել են Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում, իսկ դրանց չհակասող դեպքերում՝ Կոնվենցիայի եւ բուսասանիտարական միջոցառումների մասով միջազգային ստանդարտների շրջանակներում:

III. Ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողություն իրականացնելու ընդհանուր դրույթները

3.1. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակ, որն ընդգրկված է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկում:

3.2. Ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է մաքսային ձեւակերպումների ավարտման վայրերում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հիմնադրույթի 3.9 կետով: Կարանտինային հսկողության վերցված այն արտադրանքի նկատմամբ, որի վերջնական մաքսային ձեւակերպումը կատարվելու է առաքման վայրում, իրականացվում է կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) ժամանման վայրում (առաջնային կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)), ինչպես նաեւ իրականացվում է կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) մաքսային ձեւակերպումների ավարտման վայրում (երկրորդային կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)):

Ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Կողմերի լիազորված մարմինների պաշտոնատար անձանց կողմից այն տարածքում, որտեղ գտնվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման կամ առաքման վայրը:

3.3. Ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է կարանտինային բուսասանիտարական պահանջներին կարանտինային հսկողության վերցված ներմուծվող արտադրանքի համապատասխանությունը պարզելու նպատակով այն Կողմի տարածքում, որտեղ տեղակայված է մաքսային ձեւակերպումների ավարտման վայրը:

Կողմերի լիազորված մարմինները կարանտինային բուսասանիտարական պահանջների վերաբերյալ տեղեկությունները տեղադրում են իրենց պաշտոնական կայքերում (համացանցային ռեսուրսներում):Բուսասանիտարական պահանջների վերաբերյալ տեղեկությունները նաեւ տեղադրվում են Եվրասիական տնտեսական համայնքի տեղեկատվական համակարգի՝ տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների խորագրում եւ Մաքսային միության արտաքին ու երկկողմանի առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում:

Մինչեւ Կողմերի օրենսդրությանը համապատասխան հաստատումը եւ դրանց լիազորված մարմինների կողմից նշված տեղեկությունների տեղադրումը պաշտոնական կայքերում (համացանցային ռեսուրսներում),կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի նկատմամբ բուսասանիտարական պահանջները սահմանվում են կարանտինային ներմուծման թույլտվություններում: Կարանտինային ներմուծման թույլտվությունները տրամադրվում են այն Կողմի լիազորված մարմնի տարածքում, որտեղ տեղակայված է մաքսային ձեւակերպումների ավարտման վայրը: Կողմի լիազորված մարմինները միմյանց տեղեկացնում են տրամադրված կարանտինային ներմուծման թույլտվությունների եւ (կամ) դրանց մասին կարծիքների վերաբերյալ:

3.4. Լիազորված մարմինը բարձր ռիսկայնության ոլորտներում եւ առկա ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման, կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) արագացման եւ

բուսասանիտարական անվտանգության առկա մակարդակի պահպանման նպատակով սույն Հիմնադրույթով նախատեսված դեպքերում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կոնկրետ խմբաքանակների ներմուծման հսկիչ միջոցառումների իրականացման համար կիրառում է բուսասանիտարական ռիսկերի կառավարման համակարգը, եթե դա նախատեսված է այն Կողմի օրենսդրությամբ, որի լիազորված մարմինն իրականացնում է հսկողությունը:

Բուսասանիտարական ռիսկերի կառավարման համակարգերի կիրառման ռազմավարությունը եւ մարտավարությունը ներմուծման դեպքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման ժամանակ սահմանվում են Կողմերի օրենսդրությամբ:

3.5. Ներմուծման ժամանակ առաջնային կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) նախատեսում է հետեւյալ հսկիչ միջոցառումների իրականացումը՝

1) փաստաթղթային ստուգում,

2) տրանսպորտային միջոցների զննում,

3) կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի զննում կամ ստուգազննում՝ընտրողականությամբ՝ հաշվի առնելով բուսասանիտարական ռիսկերի կառավարման համակարգը,

4) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծումից հետո կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում, եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման մասին որոշումն ընդունվել է լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ զննման կամ ստուգազննման արդյունքների հիման վրա:

3.6. Ներմուծման ժամանակ առաջնային կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման շրջանակներում ստուգազննում անցկացնելիս վերցված նմուշների (փորձանմուշների) փորձաքննության իրականացման դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը՝ մինչեւ լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից փորձաքննության եզրակացության տրամադրումը,

սահմանին չի պահվում, եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ակնադիտական հետազոտման եւ (կամ) նմուշների (փորձանմուշների) փորձաքննության արդյունքում չեն հայտնաբերվել կարանտինային օբյեկտներին իրենց մորֆոլոգիական առանձնահատկություններով նման օրգանիզմներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ), բույսերի հիվանդությունների ախտանիշներ եւ կարանտինային օբյեկտների կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վնասվածության նշաններ (կարանտինային վնասակար օրգանիզմներ):

Այդ դեպքում փորձաքննության եզրակացությունը փորձագիտական կազմակերպության կողմից ուղարկվում է Կողմի լիազորված մարմին, որն իրականացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) ընտրանք: Եթե փորձաքննության եզրակացությամբ հաստատվում է, որ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը վարակված (ախտահարված) է, ապա նշված լիազորված մարմինը տեղեկացնում է Կողմի՝ մաքսային ձեւակերպումների ավարտման վայրի լիազորված մարմնին:

3.7. Ներմուծման ժամանակ մաքսային ձեւակերպումների ավարտման վայրում կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) ներառում է հետեւյալ հսկիչ միջոցառումների իրականացումը՝

1) փաստաթղթային ստուգում,

2) տրանսպորտային միջոցի զննում, եթե մաքսային ձեւակերպումների ավարտման վայրը համարվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայրը,

3) կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական ցածր ռիսկայնության արտադրանքի զննում,

4) կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի զննում կամ ստուգազննում՝ընտրողականությամբ՝ հաշվի առնելով բուսասանիտարական ռիսկերի կառավարման համակարգը,

5) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծումից հետո կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում, եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման մասին որոշումն ընդունվել է լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ զննման կամ ստուգազննման արդյունքների հիման վրա:

3.8. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) շրջանակներում մաքսային ձեւակերպման իրականացման վայրում ստուգազննում անցկացնելիս կարանտինային հսկողության վերցված արտադրանքից նմուշները լաբորատոր փորձաքննության ուղարկելու նպատակով կարանտինային հսկողության վերցված արտադրանքը պահվում է՝ մինչեւ լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից լաբորատոր փորձաքննության եզրակացություն ստանալը:

Կողմերի օրենսդրությամբ կարող է նախատեսվել առավելագույն ժամկետ, որի ընթացքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը կարող է պահվել, ինչպես նաեւ կարող են նախատեսվել մինչեւ լաբորատոր փորձաքննության եզրակացությունն ստանալը նման ժամկետը լրանալու դեպքում հետեւանքները:

Կողմի օրենսդրությամբ կարող են նախատեսվել դեպքեր, երբ մինչեւ լաբորատոր փորձաքննության եզրակացությունն ստանալը Կողմի լիազորված մարմնի պաշտոնատար անձը որոշում է ընդունում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բացթողումը թույլ տալու մասին՝ պայմանների պահպանման դեպքում (պահման վայրի, շրջանառության սահմանափակման մասին պայմաններ եւ այլն):

3.9. Մաքսային միության մաքսային տարածքով երրորդ երկրներ հերմետիկ, սարքին վիճակում, կնքված վագոններով, ավտոֆուրգոններով, բեռնարկղերով, սառնարան–ավտոմեքենաներով տարանցման կարգով անցնող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայրում փաստաթղթային ստուգման եւ տրանսպորտային միջոցների զննման միջոցով՝ Կողմերի ազգային ցանկում ներառված կարանտինային վնասակար օրգանիզմների առկայությունը պարզելու նպատակով:

3.10. Ժամանման եւ առաքման վայրերում կարանտին բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման արդյունքները ձեւակերպվում են հետեւյալ կերպ՝

1) կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) միջոցառում իրականացրած՝ Կողմի լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից բուսասանիտարական սերտիֆիկատի (դրա առկայության դեպքում) եւ տրանսպորտային (տեղափոխման) փաստաթղթի վրա դրվում է թույլատրագիր (դրոշմակնիք), եթե կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման արդյունքներով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծման թույլտվության կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու թույլտվության մասին ընդունվել է որոշում,

2) կազմվում է կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ակտ այն դեպքում, երբ կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու արդյունքում որոշում է ընդունվել կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումն արգելելու մասին, կամ այն «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու արգելքի մասին, կամ պայմանների պահպանմամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծման թույլտվության մասին: Կողմերի օրենսդրությամբ կարող է նախատեսվել նշված ակտի կազմումը նաեւ այն դեպքերում, երբ ժամանման վայրում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման արդյունքների հիման վրակարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը թույլատրելու մասին ընդունվել է որոշում:

Թույլատրագրերի (դրոշմակնիքների) եւ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ակտերի ձեւերը սահմանվում են Կողմերի օրենսդրությամբ: Լիազորված մարմինները տեղեկացնում են միմյանց սույն կետի համաձայն իրենց կողմից օգտագործվող թույլատրագրերի (դրոշմակնիքների), ակտերի ձեւերի մասին:

Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ակտերում արտադրանքի շրջանառության մասով լրացուցիչ կարգադրագրերի եւ լրացուցիչ սահմանափակումների գրառում չի թույլատրվում:

3.11. Եթե Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ նախատեսվում են կարանտինային հսկողության վերցված արտադրանքի առանձին հսկիչ միջոցառումների իրականացման եւ (կամ) փորձանմուշների (նմուշներ) ուսումնասիրության համար վճարի գանձում, ապա նման վճարը չի կարող գերազանցել դրանց իրականացման մոտավոր արժեքը եւ (կամ) հանդիսանալ Մաքսային միության ապրանքների պաշտպանության կամ բյուջետային նպատակներով հարկման միջոց:

3.12. Լիազորված մարմինների պաշտոնատար անձինք, որոնք իրականացնում են կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն), ապահովվում են համազգեստով՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. Ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման միջոցառումները

4.1. Փաստաթղթային ստուգում

4.1.1. Փաստաթղթային ստուգում իրականացնելու նպատակով լիազորված մարմնի պաշտոնատար անձին պետք է ներկայացվեն՝

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծվող խմբաքանակի առեւտրային եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծվող խմբաքանակի բուսասանիտարական սերտիֆիկատը՝ կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի ներմուծման դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հիմնադրույթի 7.1 կետով,

3) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծվող խմբաքանակի ներմուծման կարանտինային թույլտվությունը՝ կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի ներմուծման դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հիմնադրույթի 7.1 կետով,

4) կարանտինային օբյեկտների (կարանտին վնասակար օրգանիզմների) ներմուծման թույլտվությունը՝ գիտահետազոտական նպատակներով, եթե Կողմերի օրենսդրությանը համապատասխան, նման թույլտվության առկայությունը համարվում է

կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) ներմուծման պայման:

4.1.2. Լիազորված մարմնի պաշտոնատար անձը ներկայացված առեւտրային եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի հիման վրա սահմանում է՝

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի անվանումը,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ծագման (արտադրության, ձեւավորման) վայրը՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի՝ որոշակի երկրից, որոշակի տեղանքից ծագող կամ որոշակի կազմակերպությունում արտադրված (ձեւավորված) խմբաքանակի ներմուծման նկատմամբ արգելքների կիրառման նպատակով, որոնք սահմանված են այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի բուսասանիտարական պահանջներին արտադրանքը պետք է համապատասխանի:

4.1.3. Լիազորված մարմնի պաշտոնատար անձը ներկայացված առեւտրային եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վերլուծության հիման վրա կայացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ներմուծումը կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ձեւակերպումը տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգով արգելելու որոշում, այն դեպքում, երբ՝

1) կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանքի խմբաքանակի համար չի ներկայացվել բուսասանիտարական սերտիֆիկատ՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7.1 կետով նախատեսված դեպքերի,

2) կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանքի խմբաքանակի համար չի ներկայացվել կարանտինային ներմուծման թույլտվություն՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7.1 կետով նախատեսված դեպքերի,

3) ներմուծվել են կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ) եւ չի ներկայացվել դրանց ներմուծման թույլտվություն գիտահետազոտական նպատակներով, կամ նման օբյեկտների ներմուծումը գիտահետազոտական նպատակներով չի թույլատրվում այն Կողմի օրենսդրությանը

համապատասխան, որի բուսասանիտարական պահանջներին խմբաքանակը պետք է համապատասխանի,

4) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ծագման (արտադրության, ձեւավորման) սահմանված վայրի վրա տարածվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի՝ որոշակի երկրից, որոշակի տեղանքից ծագող կամ որոշակի կազմակերպությունում արտադրված (ձեւավորված) խմբաքանակի ներմուծման նկատմամբ կիրառվող արգելքը, եւ տվյալ խմբաքանակը բեռնվել է նման արգելք մտցնելու պահից հետո:

4.1.4. Լիազորված մարմնի պաշտոնատար անձն ստուգում է ներկայացված արտահանման բուսասանիտարական թույլտվությունը եւ կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանքի խմբաքանակի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում է կայացնում այն դեպքում, երբ՝

1) կարանտինային ներմուծման թույլտվության գործողության ժամկետը լրացել է, կամ կարանտինային ներմուծման թույլտվությունը չեղարկվել է Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով,

2) կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման նպատակով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի անվանումը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ծագման (արտադրման, ձեւավորման) վայրը, ժամանման վայրը եւ առաքման վայրը չեն համապատասխանում կարանտինային ներմուծման թույլտվությամբ նախատեսված բուսասանիտարական պահանջներին:

4.1.5. Լիազորված մարմնի պաշտոնատար անձն ստուգում է ներկայացված բուսասանիտարական սերտիֆիկատը եւ կայացնում է կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանքի խմբաքանակի ներմուծումը կամ այն «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելն արգելելու որոշում այն դեպքում, երբ՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում առեւտրային եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի տեղեկատվությանը,

2) հավաստի տեղեկությունների առկայություն այն մասին, որ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փաստացի քանակը կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակում տասը եւ ավելի տոկոսով գերազանցում է բուսասանիտարական սերտիֆիկատում նշված քանակը,

3) բուսասանիտարական սերտիֆիկատը կեղծ է կամ անվավեր է,

4) բուսասանիտարական սերտիֆիկատով չի հաստատվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համապատասխանությունը ներկայացված բուսասանիտարական պահանջներին:

4.1.6. Բուսասանիտարական սերտիֆիկատը համարվում է կեղծ հետեւյալ դեպքերում՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատը տվել է ոչ իրավասու մարմինը կամ կազմակերպությունը,

2) բուսասանիտարական սերտիֆիկատը չի համապատասխանում ձեւանմուշի համար սահմանված պահանջներին, որով տրամադրվում է բուսասանիտարական սերտիֆիկատը:

4.1.7. Բուսասանիտարական սերտիֆիկատը համարվում է անվավեր հետեւյալ դեպքերում՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատն ամբողջությամբ լրացված չէ,

2) բուսասանիտարական սերտիֆիկատը տրվել է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար այն Կողմի տարածքից այդ խմբաքանակի փաստացի դուրսբերումից հետո, որի լիազորված մարմինը տվել է այդ սերտիֆիկատը,

3) լրացել է բուսասանիտարական սերտիֆիկատի գործողության ժամկետը (բուսասանիտարական սերտիֆիկատ տրամադրելու պահից ժամկետը), եթե նման

ժամկետ նախատեսված է այն Կողմի օրենսդրությամբ, որի բուսասանիտարական պահանջներին պետք է համապատասխանի արտադրանքը,

4) բուսասանիտարական սերտիֆիկատում ներառված չեն տրանսպորտային միջոցի մակնիշը եւ (կամ) պետհամարանիշը, եթե նախատեսված է բուսասանիտարական սերտիֆիկատում տրանսպորտային միջոցի պետհամարանիշի պարտադիր նշման մասին պահանջ այն Կողմի օրենսդրությամբ, որի բուսասանիտարական պահանջներին պետք է համապատասխանի արտադրանքը,

5) բուսասանիտարական սերտիֆիկատը պարունակում է փոփոխություններ կամ լրացումներ, որոնք հաստատված չեն այն տրամադրող լիազորված մարմնի կամ կազմակերպության կողմից,

6) ներմուծման համար արգելված կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար բուսասանիտարական սերտիֆիկատը լրացվել է այն Կողմի կողմից նման արգելք մտցնելուց հետո, որի բուսասանիտարական պահանջներին պետք է համապատասխանի արտադրանքը, կամ նման արգելք մտցնելու մասին որոշմամբ նախատեսված ամսաթվից հետ (որոշակի ժամկետ լրանալուց հետո):

4.1.8. Բուսասանիտարական սերտիֆիկատով չի հաստատվում կարանտինային հսկողության վերցված ներմուծվող արտադրանքի խմբաքանակի անհրաժեշտ բուսասանիտարական վիճակը, եթե դրանում բացակայում է սերտիֆիկատի տրամադրման պահին գործող եւ փաստաթղթային ստուգման ժամանակ ուժը չկորցրած՝ բուսասանիտարական պահանջների պահպանման մասին տեղեկատվությունը:

4.1.9. Լիազորված մարմնի պաշտոնատար անձն ստուգում է գիտահետազոտական նպատակով ներմուծվող կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) ներմուծման թույլտվությունը եւ կայացնում է դրանց ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում այն դեպքում, երբ այդ թույլտվությունը տվել է ոչ իրավասու անձը, կամ այն չի համապատասխանում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ներկայացված կարանտինային օրգանիզմների խմբաքանակին:

4.1.10. Այն դեպքերում, երբ փաստաթղթային ստուգումից հետո լիազորված մարմնի պաշտոնատար անձը կայացնում է կարանտինային հսկողության վերցված

արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում, կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է վերադարձման կամ ոչնչացման՝ այդ արտադրանքի սեփականատիրոջ հաշվին:

4.2. Տրանսպորտային միջոցների զննում

4.2.1. Լիազորված մարմնի պաշտոնատար անձը տրանսպորտային միջոցի զննման ժամանակ առանց տարաները, փաթեթվածքը բացելու եւ առանց նմուշներ (փորձանմուշներ) վերցնելու իրականացնում է տրանսպորտային միջոցների եւ տեղափոխման հարմարանքների (այդ թվում՝ խցիկների, սրահների, տրանսպորտային միջոցների բեռնախցերի եւ բեռնարկղերի, կոնտեյներների) ակնադիտական հետազոտում:

4.2.2.Տրանսպորտային միջոցների զննումը կատարվում է հետեւյալ նպատակներով՝

1) տրանսպորտային միջոցների տվյալների համապատասխանության հաստատում բուսասանիտարական սերտիֆիկատում նշված տեղեկություններին,

2) կարանտինային օբյեկտների կամ դրանցով վարակվածության (ախտահարման) նշանների առկայության կամ բացակայության պարզում՝ տրանսպորտային միջոցներում կամ փոխադրման հարմարանքներում:

4.2.3.Եթե տրանսպորտային միջոցի զննման ժամանակ դրա արտաքին մասում եւ (կամ) փոխադրամիջոցի հարմարանքների վրա հայտնաբերվել են օրգանիզմներ, որոնք իրենց մորֆոլոգիական հատկանիշներով նման են կարանտինային օբյեկտներին (կարանտինային վնասակար օրգանիզմներին), ապա նշված միջատներ, մոլախոտային բույսերի սերմեր պարունակող նյութից դրանց հետազոտման նպատակով վերցվում են նմուշներ (փորձանմուշներ)՝ սույն Հիմնադրույթի V բաժնին համապատասխան:

4.2.4. Տրանսպորտային միջոցների զննման արդյունքների հիման վրա լիազորված մարմնի պաշտոնատար անձը կայացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում, եթե՝

1) տրանսպորտային միջոցի պետհամարանիշի տեղեկությունները չեն համապատասխանում բուսասանիտարական սերտիֆիկատում ներառված տեղեկություններին, եթե նախատեսված է բուսասանիտարական սերտիֆիկատում տրանսպորտային միջոցի պետհամարանիշի պարտադիր նշման մասին պահանջ այն Կողմի օրենսդրությամբ, որի բուսասանիտարական պահանջներին պետք է համապատասխանի արտադրանքը: Այդ դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է վերադարձման կամ ոչնչացման՝ այդ արտադրանքի սեփականատիրոջ հաշվին,

2) տրանսպորտային միջոցների վրա հայտնաբերված օրգանիզմները համարվում են կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ): Տրանսպորտային միջոցներն այդ դեպքում ենթակա են մաքրման եւ (կամ) վարակազերծման, իսկ դրանց իրականացման անհնարինության կամ արտադրանքի ապրանքատիրոջ կողմից այդ աշխատանքների իրականացումը մերժելու դեպքում՝ ենթակա են վերադարձման՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի հետ մեկտեղ:Տրանսպորտային միջոցի մաքրումից եւ (կամ) վարակազերծումից հետո այն ենթակա է կրկնակի զննման, իսկ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը՝ այլ վերահսկողական միջոցառումների, եթե դրանք պետք է իրականացվեն սույն Հիմնադրույթի 3.5, 3.8 եւ 3.10 կետերին համապատասխան:

4.3. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում

4.3.1. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման ժամանակ լիազորված մարմնի պաշտոնատար անձն առանց փաթեթվածքը եւ տարան բացելու, իրականացնում է բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ակնադիտական հետազոտում

4.3.2. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննումը կատարվում է հետեւյալ նպատակներով՝

1) արտադրանքի համապատասխանության հաստատում գիտահետազոտական նպատակներով ներմուծվող կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) ներմուծման թույլտվության, բուսասանիտարական սերտիֆիկատի, ներմուծման կարանտինային թույլտվության տվյալներին,

2) կարանտինային օբյեկտների կամ դրանցով վարակվածության (ախտահարման) նշանների առկայության կամ բացակայության պարզում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մակերեսին, փաթեթվածքում:

4.3.3. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման ժամանակ դրա մակերեսին, տարայի եւ (կամ) փաթեթվածքի վրա կարանտինային օբյեկտներին (կարանտինային վնասակար օրգանիզմներին) մորֆոլոգիապես նման օրգանիզմների, բույսերի հիվանդությունների ախտանիշների, կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վնասվածության նշանների հայտնաբերման դեպքերում, նմուշ (փորձանմուշ) է վերցվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքից եւ (կամ) փաթեթվածքից՝ սույն Հիմնադրույթի V բաժնին համապատասխան հետազոտություն իրականացնելու նպատակով:

4.3.4. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման արդյունքների հիման վրա լիազորված մարմնի պաշտոնատար անձը կայացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում, եթե զննման ընթացքում հաստատվել է, որ՝

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքը կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանք է, իսկ առեւտրային եւ (կամ) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված է որպես կարանտինային հսկողության վերցված ցածր ռիսկայնության արտադրանք, եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տվյալ խմբաքանակի համար չի ներկայացվել բուսասանիտարական սերտիֆիկատ,

2) արտադրանքի անվանումը չի համապատասխանում բուսասանիտարական սերտիֆիկատում նշված տեղեկություններին,

3) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մակերեսին, փաթեթվածքում հայտնաբերվել են (հաշվի առնելով հետազոտության արդյունքները) կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7.2 կետով նախատեսված դեպքերի:

Սույն կետի 1-2–րդ ենթակետերով նախատեսված դեպքերում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է արտադրանքի սեփականատիրոջ հաշվին վերադարձման կամ ոչնչացման:

Սույն Հիմնադրույթի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է արտադրանքի սեփականատիրոջ հաշվին վերադարձման, վարակազերծման կամ ոչնչացման՝ սույն Հիմնադրույթի 6.2 ենթակետին համապատասխան:

4.4. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում

4.4.1. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննումը ներառում է՝

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ակնադիտական հետազոտում, որն ամբողջությամբ բեռնաթափված է տրանսպորտային միջոցից կամ տրանսպորտային միջոցում այնպես է տեղադրված, որ լիազորված մարմնի պաշտոնատար անձը հնարավորություն ունենա հետազոտելու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ցանկացած հատված եւ կարողանա իրականացնել նմուշառում (փորձանմուշ վերցնել) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր հատվածներից նմուշառում (փորձանմուշ վերցնելը),

3) վերցված նմուշների (փորձանմուշների) հետազոտություն:

4.4.2.Լիազորված մարմնի պաշտոնատար անձը նմուշառումը կատարում է (փորձանմուշ վերցնում է), երբ հաստատվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տվյալների համապատասխանությունը առեւտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի, ներմուծման կարանտինային ներմուծման թույլտվությունների, բուսասանիտարական սերտիֆիկատի, գիտահետազոտական նպատակներով կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) ներմուծման թույլտվության տվյալներին, ինչպես նաեւ հաստատվել է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վրա կարանտինային օբյեկտների

բացակայությունը: Նմուշառման (փորձանմուշներ վերցնելու) քանակը եւ եղանակը սահմանվում է Կողմի օրենսդրությամբ:

4.4.3. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննման արդյունքների հիման վրա լիազորված մարմնի պաշտոնատար անձը կայացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում, եթե ստուգազննման ընթացքում հաստատվել է, որ՝

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքը կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության արտադրանք է, իսկ առեւտրային եւ (կամ) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված է որպես կարանտինային հսկողության վերցված ցածր ռիսկայնության արտադրանք, եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տվյալ խմբաքանակի համար չի ներկայացվել բուսասանիտարական սերտիֆիկատ,

2) արտադրանքի անվանումը չի համապատասխանում բուսասանիտարական սերտիֆիկատում նշված տեղեկություններին,

3) հաստատվել է, որ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը վարակված (ախտահարված) է կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով)՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7.2 կետով նախատեսված դեպքերի:

Սույն կետի 1-2–րդ ենթակետերով նախատեսված դեպքերում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է արտադրանքի սեփականատիրոջ հաշվին վերադարձման կամ ոչնչացման :

Սույն Հիմնադրույթի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթակա է վերադարձման, վարակազերծման կամ ոչնչացման սեփականատիրոջ հաշվին՝ սույն Հիմնադրույթի 6.2 ենթակետին համապատասխան:

V. ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ (ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ) ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

5.1. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքից վերցված նմուշները (փորձանմուշները) դրանց նմուշառման վայրում ենթակա են հետազոտման լիազորված մարմնի պաշտոնատար անձանց կողմից (այսուհետ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների անալիզ) եւ (կամ) փորձագիտական կազմակերպության կողմից (այսուհետ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների փորձաքննություն):

Փորձաքննության իրականացման նպատակով վերցված նմուշները պետք է լինեն փաթեթավորված եւ կնքված, որպեսզի մինչեւ փորձաքննությունն իրականացնելու համար ուղարկվելն ապահովվի նմուշների (փորձանմուշների) պահպանումը եւ նմուշները (փորձանմուշները) գաղտնի փոխելու անհնարինությունը:

5.2. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքից վերցված նմուշների վերլուծության արդյունքները, որի ընթացքում հաստատվել է, որ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը վարակված (ախտահարված) է կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով), արտացոլվում են կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ակտում:

Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվում է եզրակացություն, որը ստորագրում է (են) փորձագետը (փորձագետները):

5.3. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փորձաքննություն անցկացնելու դեպքերը սահմանվում են այն Կողմի օրենսդրությամբ, որի լիազորված մարմինն իրականացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում (տրանսպորտային միջոցի զննում կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում, եթե դրանց իրականացման ընթացքում թույլատրվում է կատարել նմուշների (փորձանմուշների) նմուշառում):

5.4. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի՝ կարանտինային վնասակար օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով)վարակված (ախտահարված) լինելու կամ չլինելու մասին որոշում ընդունելիս լիազորված մարմնի

պաշտոնատար անձն առաջնորդվում է փորձաքննության եզրակացության մեջ շարադրված արդյունքներով:

5.5. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) հետազոտություն կատարելու ծախսերի փոխհատուցման կարգը սահմանվում է այն Կողմի օրենսդրությամբ, որի լիազորված մարմնի կողմից ընդունվել է որոշում՝ հետազոտություն կատարելու մասին:

VI. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) վարակվածության (ախտահարման) դեպքում կիրառվող միջոցառումները

6.1. Եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման կամ ստուգազննման ժամանակ հայտնաբերել են կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) վարակվածություն (ախտահարում), ապա լիազորված մարմինը կայացնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու որոշում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հիմնադրույթի 6.3 ենթակետով:

6.2. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային վնասակար օրգանիզմներով վարակվածություն (ախտահարում) հայտնաբերելու դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելուց հետո լիազորված մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է առաջարկել արտադրանքի սեփականատիրոջն իր ցանկությամբ իրականացնել արտադրանքի վարակազերծում կամ ոչնչացում, եթե արտադրանքի վարակազերծումը կամ ոչնչացումը թույլատրվում է իրականացնել սույն Հիմնադրույթի 6.3 եւ 6.4 ենթակետերին համապատասխան:

Եթե արտադրանքի սեփականատերը հրաժարվում է իրականացնել արտադրանքի վարակազերծում կամ ոչնչացում, կամ այն հնարավոր չէ իրականացնել, ապա լիազորված մարմնի պաշտոնատար անձը արտադրանքի սեփականատիրոջ միջոցների հաշվին արտադրանքի վերադարձ կատարելու մասին ցուցում է տալիս:

6.3. Արտադրանքի սեփականատիրոջ դիմումի համաձայն՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքն ենթակա է վարակազերծման արտադրանքի սեփականատիրոջ միջոցների հաշվին՝ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) անցկացման վայրում արտադրանքի վարակազերծման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում այնպիսի եղանակներով, որոնք վնաս չեն հասցնում մարդու կյանքին եւ առողջությանը, կորուստներ չեն պատճառում շրջակա միջավայրին վարակազրկում իրականացնելուց հետո նման արտադրանք օգտագործելիս, ինչպես նաեւ չեն հանգեցնում դրա սպառողական հատկանիշների էական փոփոխության:

Վարակազերծման արդյունքների համաձայն՝ կազմվում է ակտ, իսկ կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ենթարկվում է ստուգազննման:

6.4. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքն արտադրանքի սեփականատիրոջ դիմումով ենթակա է ոչնչացման արտադրանքի սեփականատիրոջ հաշվին, եթե կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման վայրում առկա են պայմաններ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքն այնպիսի եղանակներով ոչնչացնելու համար, որոնք բացառում են կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) տարածումը, ինչպես նաեւ վտանգ չեն ներկայացում մարդու կյանքին եւ առողջությանը, կորուստներ չեն պատճառում շրջակա միջավայրին:

Ոչնչացման արդյունքների հիման վրա կազմվում է ակտ:

6.5 Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման կամ ոչնչացման թույլատրելի եղանակները սահմանվում են Կողմերի օրենսդրությամբ՝ հաշվի առնելով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի եւ կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) տեսակը, որոնցով այն կարող է վարակված (ախտահարված) լինել:

Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծումը կամ ոչնչացումն իրականացվում է նման ծառայություններ մատուցելու լիազորություններ ունեցող անձանց կողմից՝ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

VII. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի որոշ տեսակների ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման առանձնահատկությունները

7.1. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման ժամանակ կարանտինային ներմուծման թույլտվություններ եւ բուսասանիտարական սերտիֆիկատներ չեն պահանջվում ներմուծվող կարանտինային հսկողության վերցված բարձր ռիսկայնության հետեւյալ արտադրանքի համար՝

1) Մաքսային միության մաքսային սահմանով փոստային փոխադրումներում, նավերի, ինքնաթիռների, ուղեւորական վագոնների, ավտոտրանսպորտային միջոցների ուղեւորների, անձնակազմի ձեռքի ուղեբեռներում տեղափոխվող արտադրանք՝ պայմանով, որ նշված արտադրանքը սերմնանյութ, տնկանյութ կամ կարտոֆիլ չէ,

2) փայտե փաթեթավորման եւ ամրակցման նյութեր: Լիազորված մարմնի պաշտոնատար անձը տվյալ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննումը կամ ստուգազննումն իրականացնելիս ստուգում է դրանց վրա միջազգային նմուշին համապատասխան հատուկ մակնշման առկայությունը՝ Կողմի օրենսդրությանը համապատասխան,

3) կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը գտնվում է տրանսպորտային միջոցներում եւ նախատեսված է այդ տրանսպորտային միջոցների անձնակազմի սնվելու համար՝ առանց տրանսպորտային միջոցներից դուրս հանելու իրավունքի: Տրանսպորտային միջոցներում կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) վարակված պարենային մթերքի պաշարները լիազորված մարմնի պաշտոնատար անձի ցուցումով պետք է վարակազերծվեն, ոչնչացվեն կամ կապարակնքվեն հատուկ պահեստային տարածքներում Մաքսային միության մաքսային տարածքում տրանսպորտային միջոցի գտնվելու ժամանակահատվածում:

7.2. Լիազորված մարմնի կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ներմուծումը կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումն արգելելու մասին որոշման համար հիմք չի կարող լինել

կարանտինային հսկողության վերցված ներմուծվող արտադրանքի զննման կամ ստուգազննման ժամանակ հետեւյալի հայտնաբերումը՝

1) վահանակրի կարանտինային տեսակներ պարունակող պտուղներ,

2) բուսական յուղերի եւ ձեթերի անջատումից ստացված կարանտինային մոլախոտեր պարունակող քուսպ եւ այլ կարծր թափոններ(բացառությամբ կարանտինային վնասակար օրգանիզմի՝ Striga spp)՝ պայմանով, որ դրանք հետագայում կուղարկվեն այնպիսի կազմակերպություն, որտեղ իրականացվում է սերմերի զրկում կենսունակությունից,

3) կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) վարակված (ախտահարված) կարանտինային հսկողության վերցված արտադրանք, եթե այդպիսի արտադրանքի ներմուծումը թույլատրվում է Կողմի օրենսդրությանը համապատասխան այն տարածք, որտեղ գտնվում է ներմուծվող արտադրանքի ժամանման վայրը, իսկ այն դեպքում, երբ ներմուծվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքը ձեւակերպվում է «Տարանցիկ փոխադրում» մաքսային ընթացակարգով՝ ապա այդ արտադրանքի առաքման վայր:

VIII. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

8.1. Եթե ներմուծող երկրի բուսասանիտարական պահանջներին համապատասխան՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի հետ միասին պետք է ներկայացվի բուսասանիտական սերտիֆիկատ, ապա նշված բուսասանիտարական սերտիֆիկատները տրամադրում է ուղարկման վայրի Կողմի լիազորված մարմինը՝ այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Լիազորված մարմիններն այն գործունեությունը, որն ուղղված է բուսասանիտարական սերտիֆիկատ տրամադրելուն, այդ թվում՝ բուսասանիտարական սերտիֆիկատ տրամադրելու նպատակով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակը սահմանելուն, կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) չի համարվում:

8.2. Եթե ներմուծող երկրի բուսասանիտարական պահանջներին համապատասխան լրացել է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար Կողմերից մեկում տրված բուսասանիտարական սերտիֆիկատի գործունեության ժամկետը Մաքսային միության մաքսային սահմանով անցնելու պահին, ապա այն Կողմի լիազորված մարմինը, որի տարածքում է գտնվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի մեկնման վայրը, արտադրանքի սեփականատիրոջ պահանջով ձեւակերպում է նոր բուսասանիտարական սերտիֆիկատ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանվող խմբաքանակի համար, որին կցվում է՝ ժամկետը լրացած բուսասանիտարական սերտիֆիկատի բնօրինակը՝ առանց իրականացնելու կարանտինային բուսասանիտարական վիճակի սահմանման միջոցառումներ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տվյալ խմբաքանակի համար:

Այդ դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տվյալ խմբաքանակի համապատասխանության պատասխանատվությունը ներմուծող երկրի սահմանած պահանջներին դրվում է ժամկետանց բուսասանիտարական սերտիֆիկատ տրամադրած երկրի լիազորված մարմնի վրա:

IX. Անցումային դրույթները

9.1. 2011 թվականի հունվարի 1-ից սույն Հիմնադրույթի 3.3 կետի 3-րդ պարբերության, 4.1.1 ենթակետի 3-րդ ենթակետի, 4.1.3 ենթակետի 2-րդ ենթակետի, 4.1.4 ենթակետի դրույթները կորցնում են իրենց ուժը:

9.2. 2011 թվականի հունվարի 1-ից սույն Հիմնադրույթի 4.3.2 ենթակետի 1-ին ենթակետի, 4.4.2 ենթակետի եւ 7.1 ենթակետի դրույթները ենթակա չեն կիրառման «ներմուծման կարանտինային թույլտվություն» բառերի մասով»:

9.3. Մինչեւ բուսասանիտարական ռիսկերի կառավարման համակարգերի ստեղծումը Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինները կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կոնկրետ խմբաքանակի ներմուծման ժամանակ կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս կիրառվող հսկիչ միջոցառումներ ընտրելիս առաջնորդվում են իրենց օրենսդրությամբ եւ կառավարչական ձեւավորված պրակտիկայով:

9.4. Մինչեւ ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) կողմից կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) Մաքսային միության արտաքին սահման տեղափոխելու մասին որոշում ընդունելը ղազախառուսական սահմանի հատվածում՝ սահմանվում են սույն Հիմնադրույթի կիրառության հետեւյալ առանձնահատկությունները՝

1) կարանտինային հսկողության վերցված ներմուծվող այն արտադրանքի կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը), որը Մաքսային միության մաքսային տարածք է ժամանում Ղազախստանի Հանրապետության տարածքում, եւ տարանցիկ փոխադրվում է Բելառուսի Հանրապետություն կամ Բելառուսի Հանրապետության տարածքից՝ Ռուսաստանի Դաշնություն կամ Ռուսաստանի Դաշնության տարածքից՝ երրորդ երկրներ իրականացվում է՝

ա) Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքով տեղափոխման, Ղազախստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանման ժամանակ՝ Ղազախստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան,

բ) Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածք ներմուծման, Բելառուսի Հանրապետության եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածքով տեղափոխման ժամանակ մինչեւ մաքսային ձեւակերպումն ավարտելը՝ սույն Հիմնադրույթին համապատասխան, ընդ որում՝ սույն Հիմնադրույթը կիրառելու նպատակներով Մաքսային միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայր համարվում է Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքից Բելառուսի Հանրապետության (օդային տրանսպորտով տեղափոխման դեպքում) կամ Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայրը,

2) Բելառուսի Հանրապետությունում կամ Ռուսաստանի Դաշնությունում Մաքսային միության մաքսային տարածք ժամանող եւ Ղազախստանի Հանրապետություն տարանցիկ փոխադրվող կամ Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքից երրորդ երկիր տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված ներմուծվող

արտադրանքի կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է՝

ա) Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածք ներմուծման, Բելառուսի Հանրապետության եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածքով տեղափոխման ժամանակ մինչեւ Ղազախստանի Հանրապետություն արտահանելը սույն Հիմնադրույթին համապատասխան, ընդ որում՝ սույն Հիմնադրույթը կիրառելու նպատակներով Մաքսային միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մեկնման վայր համարվում է Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մեկնման վայրը,

բ) Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքով տեղափոխման եւ մինչեւ մաքսային ձեւակերպումների ավարտելը՝ Ղազախստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

Մինչեւ սույն դրույթ ում որոշում ընդունելը սույն Հիմնադրույթը կիրառվում է նաեւ կարանտինային հսկողության վերցված այն արտադրանքի կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս, որը տեղափոխվում է Ղազախստանի Հանրապետությունից Բելառուսի Հանրապետություն կամ Ռուսաստանի Դաշնություն, ընդ որում՝ սույն Հիմնադրույթի կիրառության նպատակներով Մաքսային միության մաքսային տարածք ժամանման վայր է համարվում Ղազախստանի Հանրապետության մաքսային տարածքից Բելառուսի Հանրապետության (եթե արտադրանքը տեղափոխվում է օդային տրանսպորտով) կամ Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածք տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայրը:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318

որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին

I. Կիրառության ոլորտը

1.1. «Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին» սույն Հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11–ի «Բույսերի կարանտինի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթներն իրականացնելու նպատակով Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) պետությունների ղեկավարների մակարդակով 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 30 որոշման հիման վրա:

1.2. Սույն Հիմնադրույթով սահմանվում է Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխվող կարանտինային հսկողության ենթակա արտադրանքի նկատմամբ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգն այն դեպքերում, երբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ուղարկման վայրը եւ նշանակման վայրը գտնվում են Մաքսային միության տարբեր անդամ պետությունների (այսուհետ՝ Կողմեր) տարածքում, եւ կարանտինային

հսկողության վերցված տեղափոխվող խմբաքանակը ձեւակերպված չէ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ մաքսային այնպիսի ընթացակարգով, որով նախատեսվում է ապրանքների արտահանում Մաքսային միության մաքսային տարածքից (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)):

Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգն այն դեպքերում, երբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ուղարկման վայրն ու նշանակման վայրը գտնվում են Կողմերից մեկի տարածքում, եւ կարանտինային հսկողության վերցված տեղափոխվող խմբաքանակը ձեւակերպված չէ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ մաքսային այնպիսի ընթացակարգով, որով նախատեսվում է ապրանքների արտահանում Մաքսային միության մաքսային տարածքից, սահմանվում է տվյալ Կողմի օրենսդրությամբ:

1.3. Սույն Հիմնադրույթը պարտադիր է կատարման Կողմերի գործադիր իշխանության մարմինների, դրանց լիազորված մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպաիրավական ձեւ ունեցող իրավաբանական անձի, քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից, որոնց գործունեությունը կապված է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտադրության, մթերման, վերամշակման, փոխադրման, պահպանման, իրացման եւ օգտագործման հետ:

14. Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս Կողմերի լիազորված մարմիններն առաջնորդվում են իրենց պետության օրենսդրությամբ այն դեպքերում, երբ՝

1) դա անմիջականորեն նախատեսված է սույն Հիմնադրույթով,

2) Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու ընթացքում առաջացած հարաբերություններն անմիջականորեն չեն կարգավորվում սույն Հիմնադրույթով:

II. Եզրույթներ եւ սահմանումներ

2.1. Սույն Համաձայնագրում օգտագործվում են հետեւյալ եզրույթները եւ սահմանումները՝

«նշանակման վայրի երկիր»՝ Մաքսային միության անդամ պետություն, որի տարածքում է տեղակայված նշանակման վայրը,

«ուղարկման վայրի երկիր»՝ Մաքսային միության անդամ պետություն, որի տարածքում է տեղակայված ուղարկման վայրը,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում»՝ Կողմերի լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ակնադիտական հետազոտում, որն ամբողջությամբ բեռնաթափված է տրանսպորտային միջոցից կամ տրանսպորտային միջոցում այնպես է տեղադրված, որ լիազորված մարմնի պաշտոնատար անձը հնարավորություն ունի հետազոտելու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ցանկացած հատված եւ վերցնելու նմուշներ (փորձանմուշներ) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից նմուշների (փորձանմուշների) վերցնում եւ վերցված նմուշների (փորձանմուշների) ուսումնասիրություն:

«վարակվածություն (ախտահարություն)»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) առկայություն,

«կարանտինային բուսասանիտարական գոտի»՝ տարածք, որտեղ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարված է կարանտին՝ պայմանավորված կարանտինային օբյեկտի (կարանտինային վնասակար օրգանիզմի) հայտնաբերմամբ,

«կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)»՝ Կողմերի տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող եւ կարանտինային օբյեկտների ազգային ցանկերում ներառված վնասակար օրգանիզմներ,

«կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)»՝ Կողմերի լիազորված մարմինների գործունեություն, որն ուղղված է կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) հայտնաբերմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական վիճակի հաստատմանը եւ բույսերի կարանտինի ոլորտում Կողմերի միջազգային պարտավորվածությունների եւ իրենց օրենսդրության կատարմանը,

«նշանակման վայր»՝ վայր, որտեղ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը բեռնաթափվում է այն տրանսպորտային միջոցից, որով այն տեղափոխվել է, կամ վերաբեռնվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի մեջ:

«ուղարկման վայր»՝ վայր, որտեղ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը բեռնվել է տրանսպորտային միջոցի մեջ,

«վարակազերծում»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ համալիր գործողությունների իրականացում, որոնք ուղղված են

կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) ոչնչացմանը,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի եւ տրանսպորտային միջոցների զննում»՝ լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (առանց տարայի ու փաթեթվածքի բացման) եւ տրանսպորտային միջոցների ու փոխադրման հարմարանքների (այդ թվում՝ խցիկի, սրահների, տրանսպորտային միջոցների բեռնախցիկի եւ ուղեբեռային հատվածների, կոնտեյներների) ակնադիտական հետազոտում,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողին ուղարկելու համար:

«Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկ, որը ենթակա է Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության), եւ որը հաստատվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան,

«կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրանք, տարա, փաթեթավորում, բեռներ, հող, օրգանիզմներ կամ նյութեր, որոնք կարող են լինել կարանտինային օբյեկտներ կրողներ եւ(կամ) նպաստել դրանց տարածմանը եւ որոնց նկատմամբ պետք է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցներ,

«կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնությամբ արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական բարձր ռիսկայնությամբ արտադրանքի շարքին,

«կարանտինային հսկողության վերցված բուսասանիտարական ցածր ռիսկայնությամբ արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական ցածր ռիսկայնությամբ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին,

«արտադրանքի սեփականատեր»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատեր կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատիրոջ անունից ուղարկման վայրից նշանակման վայր արտադրանքի տեղափոխման հետ կապված գործարքների եւ (կամ) այլ գործողությունների իրականացման լիազորություններ ունեցող այլ անձ,

«տրանսպորտային միջոցներ»՝ կարանտինային հսկողության վերցված խմբաքանակի տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներ,

«տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր»՝ կոնոսամենտ, բեռնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք պետք է կցվեն բեռին փոխադրման ընթացքում՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

«լիազորված մարմիններ»՝ Մաքսային միության անդամ պետությունների՝ լիազորություններով օժտված ազգային մարմիններ, որոնք իրականացնում են կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողության),

«բուսասանիտարական պահանջներ»՝ Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխվող բուսասանիտարական հսկողության վերցված

արտադրանքին, բուսասանիտարական հսկողության վերցված արտադրանքի փաթեթավորմանը, դրա տեղափոխման եղանակներին, հնարավոր նշանակման վայրին, ինչպես նաեւ բուսասանիտարական հսկողության վերցված արտադրանքի կանխարգելիչ վարակազերծման միջոցառումներին ներկայացվող պահանջներ, որոնք սահմանվել են Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պարտավորություններին եւ իրենց օրենսդրությանը համապատասխան՝ բույսերի կարանտինի ապահովման նպատակով,

«բուսասանիտարական սերտիֆիկատ»՝ միջազգային նմուշի փաստաթուղթ, որը կցվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքին եւ տրվում է արտահանող երկրի լիազորված մարմնի կողմից՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված ձեւի համաձայն (Հռոմ, 1951 թվական, 1997 թվականի խմբագրությամբ) եւ որով հավաստվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակը:

2.2. Մյուս հասկացությունները կիրառվում են այն նշանակությամբ, որը սահմանվել է Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով, իսկ դրանց չհակասելու դեպքում՝ Կոնվենցիայով եւ բուսասանիտարական միջոցառումների մասով միջազգային ստանդարտներով:

III. Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին

3.1. Կարանտինային բուսասանիտարական հսկողությունն (վերահսկողությունն) իրականացվում է՝ պարզելու համար կարանտինային հսկողության վերցված արտադրանքի համապատասխանությունը նշանակման վայրի պետության բուսասանիտարական պահանջներին:

Լիազորված մարմինները տեղեկացնում են միմյանց բուսասանիտարական պահանջների մասին եւ բուսասանիտարական պահանջների մասին տեղեկությունները տեղադրում իրենց պաշտոնական կայքերում (ինտերնետային ռեսուրսներում): Բուսասանիտարական պահանջների վերաբերյալ տեղեկությունները նաեւ տեղադրվում են Եվրասիական տնտեսական համայնքի՝ տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական համակարգում եւ Մաքսային միության արտաքին ու երկկողմանի առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում:

3.2. Բարձր բուսասանիտարական ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համապատասխանությունը կողմերի պահանջներին հաստատվում է բուսասանիտարական սերտիֆիկատով, որը տրամադրվում է ուղարկման վայրի երկրի լիազորված մարմնի կողմից եւ գործում է տրամադրման պահից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Մաքսային միության անդամ երկրների լիազորված մարմինները փոխադարձաբար ճանաչում են իրենց կողմից տրամադրվող բուսասանիտարական սերտիֆիկատները:

Լիազորված մարմինների գործունեությունը, որն ուղղված է բուսասանիտարական սերտիֆիկատների տրամադրմանը, այդ թվում՝ բուսասանիտարական սերտիֆիկատի տրամադրման նպատակով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակի հաստատմանը, կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) չէ:

Իրենց գործունեությունը համակարգելու նպատակով՝ ուղարկման վայրի պետության լիազորված մարմինները տեղեկացնում են նշանակման վայրի պետության լիազորված մարմիններին բարձր բուսասանիտարական ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված խմբաքանակների

համար բուսասանիտարական սերտիֆիկատների տրամադրման մասին՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինները պարտավոր են իրականացնել հետաքննություն այն դեպքերում, երբ նշանակման վայրի պետության լիազորված մարմինների կողմից կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման ժամանակ հայտնաբերվել են կեղծ կամ անվավեր չճանաչված բուսասանիտարական սերտիֆիկատներով ուղեկցվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի բուսասանիտարական պահանջներին անհամապատասխանության փաստեր:

3.3.Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման ընթացակարգով Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է նախատեսվել հետեւյալ հսկիչ միջոցառումների իրականացումը՝

1) փաստաթղթային ստուգում,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում,

3) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննում,

34. Իրենց օրենսդրությամբ հսկիչ միջոցառումների իրականացման առումով պաշտոնատար անձանց լիազորությունները ամրագրելու, ինչպես նավե դրանց անցկացման կարգի վե պարբերականության սահմանման ընթացքում Մաքսային միության անդամ պետությունները պետք է օգտագործեն այն իրավական միջոցները, որոնց կիրառումն էապես չի սահմանափակի կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ազատ տեղափոխումը Մաքսային միության տարածքով: Տվյալ դրույթով չի սահմանափակվում Մաքսային միության մեկ անդամ պետության իրավունքն օգտագործելու Մաքսային միության այդ անդամ

պետությունից մյուս անդամ պետություն տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի նկատմամբ կիրառվող համանման իրավական միջոցները:

35. Փաստաթղթային ստուգումն անցկացվում է նշանակման վայրերում նշանակման վայրի պետության լիազորված մարմնի պաշտոնատար անձանց կողմից:

3.6. Փաստաթղթային ստուգում անցկացնելու նպատակով պաշտոնատար անձին պետք է ներկայացվեն կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի վերաբերյալ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը եւ բարձր բուսասանիտարական ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար բուսասանիտարական սերտիֆիկատը:

3.7. Պաշտոնատար անձն ստուգում է ներկայացված փաստաթղթերը եւ հանձնարարագիր տալիս կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի վերադարձի կամ դրա ոչնչացման մասին հետեւյալ դեպքերում՝

1) բարձր ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար ներկայացված չէ բուսասանիտարական սերտիֆիկատ,

2) բուսասանիտարական սերտիֆիկատում պարունակվող տեղեկությունները չեն համապատասխանում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում պարունակվող տեղեկություններին,

3) բուսասանիտարական սերտիֆիկատը կեղծ կամ անվավեր է,

4) բուսասանիտարական սերտիֆիկատով չի հաստատվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համապատասխանությունը ներկայացված բուսասանիտարական պահանջներին:

3.8. Բուսասանիտարական սերտիֆիկատը համարվում է կեղծ հետեւյալ դեպքերում՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատը տվել է ոչ իրավասու մարմինը,

2) բուսասանիտարական սերտիֆիկատը չի համապատասխանում ձեւաթղթի համար սահմանված պահանջներին, որով տրամադրվում է բուսասանիտարական սերտիֆիկատը:

3.9. Բուսասանիտարական սերտիֆիկատը համարվում է անվավեր հետեւյալ դեպքերում՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատն ամբողջությամբ լրացված չէ,

2) բուսասանիտարական սերտիֆիկատը տրվել է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար այն պետության տարածքից այդ խմբաքանակի փաստացի դուրսբերումից հետո, որի լիազորված մարմինը տվել է այդ սերտիֆիկատը,

3) բուսասանիտարական սերտիֆիկատի գործողության ժամկետը (ժամկետը բուսասանիտարական սերտիֆիկատի տրամադրման պահից սկսած) լրացել է,

4) բուսասանիտարական սերտիֆիկատը պարունակում է փոփոխություններ կամ լրացումներ, որոնք հաստատված չեն այն տրամադրած լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից:

3.10. Բուսասանիտարական սերտիֆիկատը ճանաչվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տեղափոխվող խմբաքանակի անհրաժեշտ բուսասանիտարական վիճակը հաստատող, եթե դրանում բացակայում են բուսասանիտարական սերտիֆիկատի տրամադրման պահին գործող եւ փաստաթղթային ստուգում իրականացնելու պահին ուժը չկորցրած բուսասանիտարական պահանջների պահպանման մասին տեղեկություններ: Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծվող խմբաքանակի անհրաժեշտ բուսասանիտարական վիճակը հաստատող սերտիֆիկատը

ճանաչելու մասին որոշում կարող է ընդունվել միայն նշանակման վայրի պետության լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից:

3.11. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննումը կատարվում է հետեւյալ նպատակներով՝

1) բուսասանիտարական սերտիֆիկատում նշված տեղեկություններին արտադրանքի համապատասխանությունը հաստատելու համար,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մակերեսին եւ փաթեթվածքի վրա կարանտինային օբյեկտների կամ դրանցով վարակվածության (ախտա հարության) նշանների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար:

3.12. Կարանտինային արտադրանքի զննումն իրականացվում է լիազորված մարմնի պաշտոնատար անձանց կողմից նշանակման վայրերում նշանակման վայրի պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

3.13. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման արդյունքների հիման վրա լիազորված մարմնի պաշտոնատար անձը որոշում է ընդունում

1) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի վերադարձի կամ դրա ոչնչացման մասին, եթե զննման արդյունքում պարզ է դարձել, որ՝

բարձր բուսասանիտարական ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի համար բուսասանիտարական սերտիֆիկատ չի ներկայացվել,

արտադրանքի անվանման մասին տեղեկությունները չեն համապատասխանում բուսասանիտարական սերտիֆիկատում նշված տեղեկություններին,

2) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ստուգազննում անցկացնելու մասին, եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման արդյունքում դրա մակերեսին, փաթեթվածքի մեջ հայտնաբերվում են օրգանիզմներ, որոնք իրենց մորֆոլոգիական հատկանիշներով նման են կարանտինային օբյեկտներին (կարանտինային վնասակար օրգանիզմներին), բույսերի հիվանդությունների ախտանիշներ, կարանտինային օրգանիզմներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վնասվածության նշաններ,

3) կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ավարտի մասին այն դեպքում, երբ սույն կետի 1-2-րդ ենթակետերով նախատեսված որոշումներն ընդունելու համար հիմքեր չկան:

3.14. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննումն իրականացվում է լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից նշանակման վայրում այն դեպքում, երբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննման արդյունքում դրա մակերեսին, փաթեթվածքի մեջ հայտնաբերվում են օրգանիզմներ, որոնք իրենց մորֆոլոգիական հատկանիշներով նման են կարանտինային օբյեկտներին (կարանտինային վնասակար օրգանիզմներին), բույսերի հիվանդությունների ախտանիշներ, կարանտինային օրգանիզմներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վնասվածության նշաններ:

Այն դեպքում, երբ որոշում է կայացվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ստուգազննման մասին, որը տրանսպորտային միջոցում տեղադրված է այնպես, որ լիազորված մարմնի պաշտոնատար անձը հնարավորություն չունի հետազոտելու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ցանկացած հատված եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից չի կարող վերցնել նմուշներ (փորձանմուշներ), ապա նման արտադրանքն իր պահանջով պետք է բեռնաթափվի տրանսպորտային միջոցից:

Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) քանակությունը եւ վերցման եղանակն ու դրանց հետազոտման կարգը սահմանվում են նշանակման վայրի պետության օրենսդրությամբ:

3.15. Այն դեպքում, երբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) հետազոտման արդյունքում հաստատվում է վերջինիս վարակվածությունը (ախտահարությունը) կարանտինային օբյեկտներով (կարանտինային վնասակար օրգանիզմներով), լիազորված մարմնի պաշտոնատար անձը, նշանակման վայրի օրենսդրությանը համապատասխան, արտադրանքի սեփականատիրոջը պետք է առաջարկի իր ընտրությամբ կատարել հետեւյալը՝

1) իրականացնել արտադրանքի վարակազերծում այն դեպքում, երբ նշանակման վայրում առկա են համապատասխան պայմաններ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծում իրականացնելու համար այնպիսի եղանակներով, որ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի օգտագործումը չի առաջացնի որեւէ վտանգ մարդու կյանքի եւ առողջության համար, վարակազերծում իրականացնելուց հետո վնաս չի հասցնի շրջակա միջավայրին, ինչպես նաեւ չի հանգեցնի կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սպառողական հատկանիշների էական փոփոխմանը: Լիազորված մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի պահանջելու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծումից հետո այն ներկայացնել ստուգազննման,

2) ոչնչացնել այն, եթե կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման վայրում առկա են պայմաններ՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքն այնպիսի եղանակներով ոչնչացնելու համար, որոնք բացառում են կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) տարածումը, ինչպես նաեւ վտանգ

չեն ներկայացում մարդու կյանքին եւ առողջությանը, կորուստներ չեն պատճառում շրջակա միջավայրին:

Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծման կամ ոչնչացման թույլատրելի եղանակները սահմանվում են նշանակման վայրի պետությունների օրենսդրությամբ՝ հաշվի առնելով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի եւ կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) տեսակը, որոնցով այն կարող է վարակված (ախտահարված) լինել:

Վարակազերծման կամ ոչնչացման արդյունքների հիման վրա կազմվում է ակտ:

3.16. Եթե արտադրանքի սեփականատերը հրաժարվում է իրականացնել արտադրանքի վարակազերծում կամ ոչնչացում, կամ այն հնարավոր չէ իրականացնել, ապա լիազորված մարմնի պաշտոնատար անձը արտադրանքի սեփականատիրոջ միջոցների հաշվին կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վերադարձ կատարելու մասին ցուցում է տալիս:

Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի վարակազերծումը կամ ոչնչացումն իրականացվում է նման ծառայություններ մատուցելու լիազորություններ ունեցող անձանց կողմից՝ նշանակման վայրի պետության օրենսդրությանը համապատասխան:

3.17. 3.15-րդ կետով նախատեսված կանոնները չեն կիրառվում այն դեպքերում, երբ հայտնաբերվում են՝

1) պտուղների վրա վահանակրի կարանտինային տեսակներ,

2) բուսական յուղերի եւ ձեթերի անջատման արդյունքում ստացված կարանտինային մոլախոտեր պարունակող քուսպ եւ այլ կարծր թափոններ (բացառությամբ կարանտինային օբյեկտ՝ Striga spp–ի), եթե նման կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նշանակման վայր է

համարվում այնպիսի ձեռնարկությունները, որտեղ իրականացվում է սերմերի զրկում կենսունակությունից:

Նշված դեպքերում որոշում է կայացվում կարանտինային բուսասանիտարական հսկողությունն (վերահսկողությունն) ավարտելու մասին:

3.18. Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) շրջանակներում հսկիչ միջոցառումների իրականացման համար վճար չի գանձվում:

3.19. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման արդյունքները ձեւակերպվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3.20. Նշանակման վայրի օրենսդրությամբ չեն կարող նախատեսվել կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պաշտոնատար անձին այնպիսի փաստաթղթեր ներկայացնելու մասին պահանջներ, որոնց պարտադիր ներկայացնելը սահմանված չէ սույն Հիմնադրույթով:

3.21. Այն դեպքում, երբ լիազորված մարմինների պաշտոնատար անձինք կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս հայտնաբերում են բավականաչափ տվյալներ, որոնք ցույց են տալիս Համաձայնագրի, սույն Հիմնադրույթի կամ Մաքսային միության համապատասխան անդամ պետության՝ բույսերի կարանտինի մասին օրենսդրության խախտման հետ կապված իրավախախտման կամ հանցագործության դեպքի առկայություն, ապա նրանք իրենց իրավասության շրջանակներում ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ մեղավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

3.22. Մինչեւ ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) կողմից կարանտինային բուսասանիտարական

հսկողությունը (վերահսկողությունը) Մաքսային միության արտաքին սահման տեղափոխելու մասին ղազախառուսական սահմանի մասով որոշում ընդունելը, սահմանվում են սույն Հիմնադրույթի կիրառման հետեւյալ առանձնահատկությունները՝

1) Բելառուսի Հանրապետությունից կամ Ռուսաստանի Դաշնությունից Ղազախստանի Հանրապետության տարածք տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Ղազախստանի Հանրապետություն ներմուծելիս՝ Ղազախստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

2) Ղազախստանի Հանրապետությունից Բելառուսի Հանրապետություն կամ Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին Հիմնադրույթին համապատասխան, ընդ որում՝ նման Հիմնադրույթի կիրառման նպատակներով Մաքսային միության մաքսային տարածքի ժամանման վայր է համարվում Բելառուսի Հանրապետության (եթե կարանտինային հսկողության վերցված արտադրանքը փոխադրվում է օդային տրանսպորտով) կամ Ռուսաստանի Դաշնության մաքսային տարածքի ժամանման վայրը: